ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄԸ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ին ՆԱԽԱՁԵՌՆՈՂՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԾ ՕՐԱԿԱՐԳՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԸ ԵՐԿՈՒ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով և 7-րդ մասի 2-րդ կետով «Իմ քայլը» խմբակցությունը որոշում է.

Ազգային ժողովի խորհրդին ներկայացնել միջնորդություն՝

2021թ. ապրիլի 28-ին, ժամը 11:00-ին նախաձեռնողների սահմանած օրակարգով՝, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» և ««Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (Պ-952-27.04.2021-ՊԻ-011/0), «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-915-30.03.2021-ՏՀ-011/0) օրենքի նախագիծը առանց գլխադասային հանձնաժողովի եզրակացության առաջին ընթերցմամբ, ինչպես նաև այդ նախագծերի փաթեթը երկրորդ ընթերցմամբ քննարկելու և Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելու վերաբերյալ:

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ քրեական օրենսգրքի 149--րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու դեպքերի համար, սակայն, այն թերի է: Նախկինում տեղի ունեցած ընտրությունների ժամանակ բազմաթիվ դեպքեր են եղել, երբ մի խումբ անձինք միտումնավոր խոչընդոտել են ընտրական գործընթացը, ինչի արդյունքում տվյալ տեղամասում քվեարկության արդյունքները անվավեր են ճանաչվել, սակայն, այն անձինք, ովքեր խոչընդոտել էին ընտրական գործընթացը, ՀՀ քրեական օրենսգրքի գործող կարգավորումների թերի լինելու պատճառով պատասխանատվության չեն ենթարկվել: ՀՀ քրեական օրենսգրքի 149.1.-ին հոդվածի ներկայիս խմբագրությամբ քրեական պատասխանատվություն է նախատեսված միայն քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելու համար: Իսկ քարոզչությունը խոչընդոտելու համար փաստացի որևէ պատասխանատվություն նախատեսված չէ:

Տեղամասային կենտրոնում կամ տեղամասի մուտքի մոտ բռնություն գործադրելու կամ դրա սպառնալիքի համար ներկայումս պատասխանատվություն է նախատեսված միայն այն դեպքերի համար, երբ ինքը՝ միջադեպը անմիջական կապ ունի ընտրական գործընթացի հետ, այսինքն՝ բռնության ենթարկվողը հանձնաժողովի անդամ է, վստահված անձ, դիտորդ կամ լրագրող: Իսկ այն դեպքերում, երբ ուղղակի տեղամասի այցելուներն են իրար միջև տեղամասում կռիվ հրահրում, փաստացի կարող են անպատիժ մնալ, չնայած, որ այդ ամենի արդյունքում ընտրությունների բնականոն գործընթացը արդեն իսկ խոչընդոտվել է: Ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի վերաբերյալ կեղծ տեղեկություններ հրապարակելը ՀՀ քրեական օրենսգրքի ներկա կարգավորումներով որևէ պատասխանատվություն չի ենթարում, ինչը կուսակցություններին և թեկնածուներին դարձնում է անպաշտպան մեդիա ահաբեկչության առջև:

ՀՀ քրեական օրենսգրքի ներկա կարգավորումներով հավաքներին մասնակցելուն կամ մասնակցելուց հրաժարվելուն հարկադրելը քրեական պատասխանատվություն է ենթադրում միայն այն դեպքերում, երբ այդ գործողությունը կատարվել է բռնությամբ կամ բռնության սպառնալիքով, իսկ մնացած դեպքերում անձին կարող են հարկադրել հավաքին մասնակցել կամ հրաժարվել հավաքին մասնակցելուց և մնալ անպատիժ:

Պաշտոնատար անձի կարգավիճակ ձեռքբերելուն խոչընդոտող տեղեկությունն իրավասու մարմնին չհայտնելը ներկայումս ևս քրեորեն պատժելի է, սակայն,

ձևակերպումները հստակ չեն և հնարավորություն են տալիս նման չարամտություն ունեցող անձանց խուսափել պատասխանատվությունից:

Քվեարկության նախորդ օրը և բուն քվեարկության օրը քարոզչություն կատարելը արգելված է «Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով, սակայն, այդ պահանջը խախտելու համար որևէ պատասխանատվություն նախատեսված չէ: Պատասխանատվություն նախատեսված չէ նաև քարոզչություն կատարելու իրավունք չունեցող անձի կողմից քարոզչություն կատարելու դեպքերի համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածում առաջարկվում է պատասխանատվություն նախատեսել բոլոր այն դեպքերի համար, երբ ընտրական գործընթացի խոչընդոտման արդյունքում տեղամասում քվեարկության արդյունքները անվավեր են ճանաչվում: Նախագծով առաջարկվում է նախընտրական քարոզչության խոչընդոտման, տեղամասային կենտրոնում կամ տեղամասի մուտքի մոտ բռնություն գործադրելու կամ դրա սպառնալիքի համար ևս նախատեսել քրեական պատասխանատվություն: Առաջարկվում է ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ թեկնածուի վերաբերյալ կեղծ տեղեկություններ հրապարակելու համար ևս սահմանել քրեական պատասխանատվություն, երբ այդ գործողությունը կատարվել է շահադտական նպատակներով, մի խումբ անձանց կողմից կամ կազմակերպված խմբի կողմից: Այսինքն, անհատի կողմից կեղծ տեղեկություն հրապարակելը այս կարգավորման տիրույթից դուրս է: Հստակեցվում է նաև պաշտոնատար անձի կարգավիճակ ձեռքբերելուն խոչընդոտող տեղեկությունն իրավասու մարմնին չհայտնելու դեպքում քրեական պատասխանատվություն ենթադրող դրույթը: Նույն նպատակով լրացում է նախատեսվում նաև «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով առաջարկվում է վարչական տույժ նախատեսել քվեարկության նախորդ օրը և բուն քվեարկության օրը քարոզչություն կատարելու, քարոզչություն կատարելու իրավունք չունեցող անձի կողմից քարոզչություն կատարելու դեպքերի համար:

Նախագծերի ընդունումը կնպաստի ընտրական գործընթացների օրինականության բարձրացմանը: Նոր կարգավորումների շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում անցկացվող ընտրությունները կդառնան ավելի ազատ, արդար և մրցակցային:

Վերջին երկու տարվա վիճակագրական տվյալները փաստում են, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված ճանապարհային հարկի այս արտոնությունը չի ծառայում իր նպատակին, ավելին, անհավասար մրցակցային պայմաններ է ստեղծում տնտեսվարողների շրջանում: Օրենսգրքով սահմանված մինչեւ մեկ կիլոմետր արտոնյալ

գոտում առկա է ընդամենը մեկ մաքսային վերահսկողության տարածք, եւ մի շարք գործարարների պնդմամբ այդ տարածքում ֆիզիկապես հնարավոր չէ նույնիսկ լրացուցիչ մեկ պահեստ կառուցել: Ըստ ՊԵԿ տվյալների՝ մինչեւ 1կմ տարածության վրա գտնվող այդ պահեստում բեռնաթափվում է Հայաստանի Հանրապետություն մուտք գործող բեռնատարների ընդամենը 10-15 տոկոսը, իսկ մնացյալ շուրջ 85 տոկոս բեռնատարները, շատ դեպքերում տեղափոխելով միեւնույն ապրանքները, լրացուցիչ վճարում են 110-ից մինչեւ 152 հազար ՀՀ դրամ ճանապարհային հարկ, ինչն էլ, բնականաբար, բարձրացնում է ներկվող ապրանքների ինքնարժեքը: Ավելին, ստացված տվյալները փաստում են, որ արտոնյալ գոտում գտնվող մաքսային պահեստում (Ագարակ տերմինալ ՍՊԸ) բեռնաթափվում եւ հետեւաբար ճանապարհային հարկից ազատվում են հիմնականում երկու ընկերությունների շուրջ 65 տոկոսը:

«ԻՄ ՔԱՅԼԸ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՄԱԿՈՒՆՑ**

27.04.2021թ.